ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆԻ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Հակոբ Արշակյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Աբու Դաբի (ԱՄԷ), 2021թ. փետրվարի 19-22-ը:

4. **Հրավիրող կողմը.**

ԱՄԷ պաշտպանության հարցերով պետնախարար Մոհամմադ Ահմադ ալ-Բովարդի ալ-Ֆալասի:

5. **Գործուղման նպատակը.**

2021թ. փետրվարի 21-ից 25-ն ընկած ժամանակահատվածում Աբու Դաբիում կայանալիք «IDEX 2021» միջազգային պաշտպանության համաժողովին և ցուցահանդեսի բացման արարողությանը մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները.**

Համաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել արդյունաբերության, քաղաքացիական, ռազմական սարքավորումների, պաշտպանական էլեկտրոնիկայի ու տեխնիկայի, անօդաչու համակարգերի տեխնոլոգիաների ներգրավման, դրանց ներուժի առավելագույն օգտագործման հնարավորությունները հաջորդ տասնամյակի ընթացքում:

Միջոցառմանը շրջանակներում Հայաստանը մասնակցում էր միասնական տաղավարով, որտեղ ներկայացված էին հայկական ռազմաարդյունաբերական 14 ընկերությունների նորագույն արտադրանքները և մշակումները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

IDEX-2021 միջազգային ռազմարդյունաբերական ցուցահանդեսի շրջանակներում՝ փետրվարի 21-ին նախարար Հակոբ Արշակյանը հանդիպել է ԱՄԷ պաշտպանության պետնախարար Մոհամմադ Ահմադ ալ-Բովարդի հետ:

Հանդիպման ընթացքում նախարարները քննարկել են ԱՄԷ և ՀՀ հնարավոր համագործակցությունը և մտքեր փոխանակել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տարբեր հարցերի շուրջ: Քննարկվել են առկա զարգացումները, ինչպես նաև դրանց վրա համավարակի ազդեցության հետևանքներն ու դրանց վերացման տարբերակները:

Նախարար Արշակյանը ԱՄԷ պաշտպանության հարցերով պետնախարարին հրավիրել է՝ մասնակցելու «ArmHiTec-2021» ցուցահանդեսին, ով սիրով ընդունել է հրավերը:

Աբու Դաբի այցի շրջանակներում հանդիպում է կազմակերպվել «Թավազուն» հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները՝ հայկական ընկերությունների հետ ռադիոլոկացիոն կայանների (ռադարներ), օպտիկայի և արհեստական բանականության ոլորտներում համագործակցելու վերաբերյալ, որոնց շուրջ արդեն իսկ որոշակի առաջընթաց և պայմանագրեր կային:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է «Թավազուն» տնտեսական խորհրդի հետ համատեղ մշակել համապատասխան ոլորտներում համագործակցելու հստակ ծրագրեր՝ հայաստանյան շուկայում ներդրումներ ապահովելու նպատակով: Նմանատիպ առաջարկներ են եղել նաև տարբեր երկրների պատվիրակությունների ղեկավարների և ընկերությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հ. ԱՐՇԱԿՅԱՆ

03.03.2021թ.